

Տ. ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ծնվել է 1958 թ. հուլիսի 26-ին, Եղեգնաձորի շրջանի Եղեգնաձոր ավանում: Ավազանի անունն է Վահան:

Զավեն վրդ. Խաչատրյանը սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, որից հետո 1973 թ. տեղափոխվել է Երևան քաղաք և ընդունվել Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի «Գեղանկարչության» բաժինը:

1977 թ. գերազանց պաշտպանելով իր ավարտաճառը գեղարվեստի ուսումնարանում՝ զորակոչվել է զինծառայության:

1980 թ. զորացրվելուց հետո ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի ստացել է սարկավագական աստիճան:

1984 թ. հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտաճառ ներկայացնելով «Թեմատիկ պատկերազարդումը ձեռագիր Ավետարաններում մինչև 12-րդ դարը» թեմայով:

1985 թ. սեպտեմբերի 8-ին Մայր տաճարում, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով և ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Այժմ Տ. Զավեն վրդ. Խաչատրյանը կատարում է Վեհափառ Հայրապետի գավազանակրի, միաժամանակ և Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան տնօրենի պաշտոնները: